ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Վայոց ձորի մարզպետարանի (Հայաստանի Հանրապետություն) և Արխանգելսկի մարզի Կառավարության (Ռուսաստանի Դաշնություն) միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար համագործակցության մասին

Վայոց ձորի մարզպետարանը (Հայաստանի Հանրապետություն) և Արխանգելսկի մարզի Կառավարությունը (Ռուսաստանի Դաշնություն), այսուհետ՝ Կողմեր,

ուշադրություն դարձնելով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության Կառավարությունների միջև 2001 թվականի սեպտեմբերի 15-ին կնքված «Հայաստանի Հանրապետության մարզպետարանների և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների (կառավարությունների) միջև համագործակցության սկզբունքների մասին» համաձայնագրի դրույթները,

հիմնվելով առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային փոխշահավետ երկկողմ կապերի ընդլայնման փոխադարձ հետաքրքրվածության վրա,

ձգտելով ստեղծել Վայոց ձորի մարզի (Հայաստանի Հանրապետություն) և Արխանգելսկի մարզի (Ռուսաստանի Դաշնություն) կազմակերպությունների (այսուհետ՝ Կազմակերպություններ) միջև շուկայական հարաբերությունների զարգացման համար բարենպաստ պայմաններ,

կարևորելով կազմակերպությունների միջև արտադրական և տեխնոլոգիական կապերի պահպանումն ու զարգացումը,

համոզված լինելով, որ այս համագործակցությունը կստեղծի բարենպաստ պայմաններ Վայոց ձորի մարզի (Հայաստանի Հանրապետություն) և Արխանգելսկի մարզի (Ռուսաստանի Դաշնություն) միջև արտաքին տնտեսական և հումանիտար կապերի զարգացման և խորացման համար,

պայմանավորվեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերն իրենց իրավասության սահմաններում իրականացնում են փոխշահավետ համագործակցություն տնտեսության, գիտության, կրթության, մշակույթի, սպորտի, զբոսաշրջության և երիտասարդական քաղաքականության ոլորտներում՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրենսդրություններին համապատասխան:

Հոդված 2

Կողմերն աջակցում են կազմակերպությունների միջև պայմանագրերի կնքմանը՝ կարևորագույն տեսակների մրցունակ արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքների արտադրության և ծառայությունների տրամադրման վերաբերյալ, որոնք բավարարում են կազմակերպության պահանջները և ապահովում են փոխշահավետ պայմաններ համատեղ արտադրատնտեսական, առևտրային և այլ գործունեության տեսակների համար՝ Հայաստանի Հանրապետություն և Ռուսաստանի Դաշնություն օրենսդրություններին համապատասխան:

Հոդված 3

Կողմերը համագործակցություն են իրականացնում հետևյալ ուղղություններով.

-առևտրատնտեսական առաջարկությունների, ծառայությունների առանձին տեսակների ցանկի և արտահանվող արտադրանքի փոխանակում, որոնք գտնվում կամ արտադրվում են Վայոց ձորի մարզի (Հայաստանի Հանրապետություն) և Արխանգելսկի մարզի (Ռուսաստանի Դաշնություն) տարածքներում,

-համատեղ ներդրումային ծրագրերի մշակում,

-տնտեսական, վիճակագրական և այլ տեղեկատվության փոխանակում՝ բացառությամբ այն տեղեկությունների, որոնք, ըստ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրենսդրությունների, պարունակում են պետական և առևտրական գաղտնիք,

- փորձի փոխանակում՝ ձեռնարկատիրության, հարկային քաղաքականության և սոցիալ-իրավական պաշտպանության զարգացման, բնակչության զբաղվածության ապահովման վերաբերյալ:

Հոդված 4

Կողմերն օժանդակում են ագրոարդյունաբերության ոլորտում համագործակցության զարգացմանը՝ գյուղատնտեսական տոնավաճառների, մասնագիտացված ցուցահանդեսների, գիտագործնական համաժողովների, սեմինարների և այլ միջոցառումների միջոցով՝ Վայոց ձորի մարզի (Հայաստանի Հանրապետություն) և Արխանգելսկի մարզի (Ռուսաստանի Դաշնություն) ագրոարդյունաբերական համալիրի ներկայացուցիչների և կազմակերպությունների մասնակցությամբ:

Հոդված 5

Կողմերը ստեղծում են պայմաններ մշակույթի, արվեստի, սպորտի, զբոսաշրջության, երիտասարդական քաղաքականության ոլորտներում հարաբերությունների զարգացման ու ամրապնդման համար, ինչպես նաև

աջակցում են գեղարվեստական ցուցահանդեսների, թատերահամերգային կոլեկտիվների, երիտասարդական և սպորտային պատվիրակությունների, զբոսաշրջային ցուցադրման օբյեկտների գործունեության կազմակերպման աշխատանքների փորձի փոխանակմանը:

Հոդված 6

Կողմերը նպաստում են կրթության, գիտության և տեխնիկայի ոլորտում համագործակցության զարգացմանը, համատեղ գիտական միջոցառումների և ցուցահանդեսների անցկացմանը, համատեղ գիտահետազոտական, փորձարարաշինարարական և նախագծային աշխատանքների կատարմանը՝ Դաշնային պետական ինքնավար կրթական հաստատության Մ.Վ. Լոմոնոսովի անվան Հյուսիսային (Արկտիկական) դաշնային համալսարանի բարձրագույն մասնագիտական կրթության հիմքի վրա, Վայոց ձորի մարզի (Հայաստանի Հանրապետություն) և Արխանգելսկի մարզի (Ռուսաստանի Դաշնություն) շահագրգիռ գիտահետազոտական կազմակերպությունների միջև անմիջական համագործակցությանը:

Հոդված 7

Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, որոնք կձևակերպվեն արձանագրություններով:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի՝ այլ համաձայնագրերից բխող իրավունքներն ու պարտականությունները, որոնց կողմ են նրանք հանդիսանում:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրը հիմք է հանդիսանում Կողմերի կողմից համագործակցության կոնկրետ ոլորտներում արձանագրություններ կնքելու համար:

Սույն Համաձայնագրի իրագործմանն աջակցելու և վերահսկողության իրականացման և դրա հիմքի վրա արձանագրությունների կնքման համար, ինչպես նաև համագործակցության առանձին ոլորտներում փոխադարձ պայմանավորվածությունների իրականացման նպատակով կարող են անցկացվել երկկողմ բանակցություններ, ձևավորվել համատեղ հանձնաժողովներ և աշխատանքային խմբեր:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Վայոց ձորի մարզպետարանի (Հայաստանի Հանրապետություն) կողմից՝ Արխանգելսկի մարզի Կառավարության (Ռուսաստանի Դաշնություն)՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերի կատարման մասին ծանուցագրի ստանալու օրվանից:

Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով: Սույն Համաձայնագիրի գործողության ժամկետը ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդող հինգ տարիներով, եթե Կողմերից ոչ մեկը գրավոր չի հայտնում մյուս Կողմին սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին ոչ ուշ, քան սկզբնական կամ ցանկացած հաջորդող ժամկետից վեց ամիս առաջ:

Համաձայնագրի գործողության դադարեցումը չի ազդում սույն Համաձայնագրին համապատասխան իրականացվող ծրագրերի և նախագծերի իրականացման հետագա ընթացքի վրա, որոնց կատարումը կշարունակվի մասնակիցների կողմից համաձայնեցված պայմաններով:

Կնքվել է Երևան քաղաքում «13» հոկտեմբերի 2012թ.-ին՝ երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու օրինակն էլ հավասարազոր են:

Վայոց Ձորի մարզպետարանի կողմից (Հայաստանի Հանրապետություն)	**Արխանգելսկի մարզի Կառավարության կողմից (Ռուսաստանի Դաշնություն)**
Վայոց Ձորի մարզպետ՝	**Արխանգելսկի մարզի նահանգապետ՝**
Է. Ֆ. Ղազարյան	**Ի. Ա. Օռլով**